



## 2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների  
բեկնածու, հնագետ)

# ԼՄԲԱՏԱՎԱՆԻԲԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**Լ**մբատավանքը գտնվում է Սուվե-տական Հայաստանի այժմյան Արթիկի շրջանի Արթիկ քաղաքից մեկ կիլոմետրաչափ դեպի արևմուտք, բարձրավանդակի գոգավորության լանջի փոքրիկ հարթակի վրա, երբեմնի Շիրակի գավառի գեղեցիկ բնության գրկում: Դեռ հեռվից կապույտ երկնքի և կանաչազարդ կամ ձյունապատ լանջերի ֆոնի վրա երևում է վառ կարմրագույն հանքաքարից կառուցված վանքի ուրվագիծը: Վանքն իր անունը ստացել է համանուն փոքրիկ շենից, որի տների ավերակների հետքերը՝ դար ու փոսերի ձևով մինչև այսօր էլ պահպանվել են վանքին կից:

Հայ հոգևոր կյանքի պատմության մեջ եղակի են այն մենաստանները, որոնց վանական կառուցվածքները բաղկացած են միայն մեկ եկեղեցուց. այդպիսին է նաև Լմբատավանքը՝ իր միակ եկեղեցու շենքով, որը վիմական արձանագրությունների մեջ հայտնի է Ս. Ստեփանոս անունով: Չնայած այն բանին, որ Արթիկի շրջանի 1948 թվականի հնագիտական հետազոտությունների ժամանակ այդ եկեղեցու արևմտյան կողմում նկատվեցին քարաշար պատերի հետքեր, որոնք հիշեցնում էին եկեղեցու արևելյան արսիղը՝ կից խորաններով, սակայն մինչև այժմ համապատասխան պեղումներ չկատարելու հետևանքով, այդ բանը վերջնականապես դեռ պարզված չէ:

Պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում այդ մենաստանի մասին: Հայտնի չէ նաև, թե ե՞րբ է կառուցվել այն և ովքեր են եղել նրա կառուցողները: Վանքի անցյալի մասին միակ հիշատակարանները նրա վրա փորագրված արձանագրություններն են:

Այդ արձանագրությունների համաձայն, որոնք մեջ ենք բերում, ըստ հնարավորի, ժամանակագրական կարգով, ոմն Կարապետ ուխտի գալով Ս. Ստեփանոսի դուռը, տեսնում է, որ վանքը ջուր չունի և ընդառաջելով բնակիչների թախանձանքին, ջուր է բերել տալիս վանքը (արձանագրություն № 1): Արձանագրությունը տարեթիվ չունի. հավանաբար ամենահին արձանագրությունը լինի և, մեր կարծիքով, պետք է վերաբերի մինչ սելջուկյան արշավանքների ժամանակաշրջանին:

Հայոց ՈՒՆ (640, մեր թվագրության 1191) թվականը կրող մի արձանագրության մեջ ասվում է (արձանագրություն № 2), որ Տեր Բարսեղը անօրեններից գնում է վանքը և միաժամանակ վանքին է նվիրում Ցիյք գյուղը, ինչպես և վանքին է վերադարձնում ջուրը, որը դեռ հնուց նրան էր պատկանում:

Արձանագրությունից միանգամայն պարզ է դառնում, որ Լմբատավանքը նույնպես ենթարկվել է սելջուկների ասպատակություններին, որովհետև արձանագրության մեջ գործածած «անօրեն» խոսքը անկասկած վերաբերում է սելջուկներին և որ վանքն իր

կալվածներով սեփականված պետք է լինեն սելջուկ խաների կողմից: Արձանագրության մեջ հիշատակված Տեր Բարսեղը, որը, ինչպես հետո կտեսնենք, Վահրամ Պահլավունի իշխանի որդին է և, ամենայն հավանականությամբ, պետք է ստանձնած լինի նաև վանքի առաջնորդությունը: Իսկ դրանից էլ հետևում է, որ կմբատավանքը, որը մինչ սելջուկյան արշավանքները հանդիսանում էր Պահլավունյաց տոհմի սեփականությունը, սելջուկյան արշավանքներից հետո էլ նորից դառնում է նրանց սեփական կալվածքը: Վանքին նվիրած Ցիցք գյուղը, ինչպես պարզել են հնագիտական հետազոտությունները, գտնվելիս է եղել կմբատավանքից կիս կիլոմետրաչափ դեպի հարավ-արևմուտք, սարահարթի վրա, այժմյան Պեմզաշեն գյուղը տանող կարճ ճանապարհի եզրին:

Շիրակ գավառի առաջնորդ և Անի քաղաքի եպիսկոպոս Գրիգոր արքեպիսկոպոսը, իր հորեղբայր Տեր Բարսեղի միջոցով կմբատավանքին է նվիրում իր կողմից դրամով գնված Հայրենյաց Թաղք գյուղը (արձանագրություն № 3): Արձանագրության մեջ հիշատակված Գրիգոր արքեպիսկոպոսը նույնպես Պահլավունյաց նշանավոր ազգատոհմից է՝ Վահրամ Պահլավունի իշխանի թոռը, Ապուղումրի որդին: Այն փաստը, որ նվիրատվությունը կատարվում է Տեր Բարսեղի միջոցով, ինքնին վկայում է, որ վերջինս կմբատավանքի առաջնորդն էր, որը նախորդ արձանագրության համաձայն վանքը գնում է սելջուկներից: Այդ արձանագրությամբ կրկին անգամ հաստատվում է, որ կմբատավանքը հանդիսանում էր Պահլավունիների տան սեփականությունը: Վանքին նվիրված Հայրենյաց Թաղք գյուղը, համաձայն հնագիտական ուսումնասիրությունների, գտնվելիս է եղել այժմյան Արթիկ քաղաքից քիչ վերև, դեպի հարավ, տուֆի քարահանքերի սահմաններում: Արձանագրությունը տարեթիվ չունի, սակայն անկասկած է, որ նա նույնպես պետք է վերաբերի ժԲ դարի վերջերին՝ 1191 թվականից հետո:

Անի քաղաքի այդ նույն եպիսկոպոս, Պահլավունի Ապուղամրի որդի Տեր Գրիգորը, կմբատավանքին է նվիրում իր սեփական Արդիք գյուղը (արձանագրություն № 4): Այդ արձանագրությունը նույնպես տարեթիվ չունի, ամենայն հավանականությամբ այն պետք է վերաբերի ժԲ դարի վերջերին կամ ժԳ դարի սկզբներին: Արձանագրությունից հավանական է դառնում, որ Տեր Բարսեղը արդեն մահացած պետք է լիներ և վանքին առաջնորդ եղած լիներ մեկ ուրիշը: Վանքին նվիրված Արդիք գյուղը ներկայիս Արթիկ քաղաքն է:

Բշտկա թոռներ Գրիգորը և իր եղբայրները կմբատավանքի Ս. Ստեփանոսին են նվիրում Սառնաղբյուր գյուղը՝ Մովսեսի վանահայրության և նրա եղբայրակից (վանքի միաբանության անդամներ) Առաքելի ու Վարդանի ժամանակ (արձանագրություն № 5): Այդ արձանագրությունը, որը նույնպես տարեթիվ չունի, պետք է փորագրված լինի ժԳ դարի առաջին տասնամյակում և, որ Մովսեսը պետք է փոխարինած լինի Տեր Բարսեղին: Վանքին նվիրված Սառնաղբյուր գյուղը, ինչպես առիթ ենք ունեցել ցույց տալու մեր մի այլ աշխատության մեջ (տես «Էջմիածին» ամսագիր, 1956 թ. № 8—9), գտնվելիս է եղել այժմյան Արթիկի շրջանի Հառիճ գյուղից ու Հառիճա վանքից մեկ ու կես կիլոմետրաչափ դեպի հարավ, սարահարթի վրա, ձորաբերին:

Ամիր սպասալար Ջաքարեն կմբատավանքի Ս. Ստեփանոսին է նվիրում Ցիցք գյուղը՝ իր լեռներով, դաշտերով ու ջրով (արձանագրություն № 6): Արձանագրությունը տարեթիվ չունի, բայց որովհետև Ջաքարեն վախճանվել է 1213 թվականին, ապա այդ արձանագրությունը պետք է փորագրված լինի մինչև 1213 թվականը և 1191 թվականից ոչ շուտ, քանի որ այդ թվականին Տեր Բարսեղը նույն Ցիցք գյուղը նվիրում է կմբատավանքին: Արձանագրության ժամանակը, մեր կարծիքով, պետք է համարել ժԳ դարի առաջին տասնամյակի վերջերը: Արձանագրությունից հետևում է, որ այդ ժամանակ կմբատավանքը իր կալվածներով այլևս չէր կազմում պահլավունիների սեփականությունը, այլ նրանք պատկանում էին Հյուսիսային Հայաստանի նոր տերերին՝ Ջաքարյան իշխաններին:

Ոմն Սիմոն, Մատուրի որդին, իր բաժին այգին նվիրում է կմբատա Ս. Ստեփանոսին (արձանագրություն № 7):

Մետրե Բարսեղը իր բաժին այգին տալիս է Ս. Ստեփանոսին (արձանագրություն № 8):

Ոմն իշխան 1251 թվականին իր հնձանը վաճառում է կմբատավանքի Ս. Ստեփանոսի սպասալար (հավանաբար վանքի առաջնորդը) Խաչատուրին (արձանագրություն № 9):

Գրիգոր արքեպիսկոպոսի ընդարձակ արձանագրության վերջում հետագայում ավելացրած «զեբջանիկ հայր գԱռաքեալ...» ամենայն հավանականությամբ Բշտկա թոռների արձանագրության մեջ հիշատակված վանքի միաբանության անդամ Առաքելը պետք է լինի: Ուստի 1191 թվականից մինչև 1251 թվականը հայտնի են դառնում իրար հաջորդող կմբատավանքի հետևյալ առաջնորդները՝ Բարսեղ, Մովսես, Առաքել և Խաչատուր:

Բացի վերը մեջքերված ինը արձանագրութ-  
յուններից, հուշարձանի վրա կան էլի մի  
քանի փոքր արձանագրություններ, որոնք  
խիստ հողմահարված, քայքայված լինելու  
պատճառով անընթեռնելի են: Մի ուրիշ, սև  
ներկով գրած ընդարձակ արձանագրություն  
էլ եղել է եկեղեցու ներսում, արևելյան աբ-  
սիդի հյուսիսային պատի ծեփի վրա, որից  
առանձին աննշան հետքեր են պահպանվել:

Սրանցով ավարտվում են վանքի վիմա-  
գրությունները և նրա մասին եղած հիշա-

վերջին՝ № 9 արձանագրությունը որոշա-  
կի կերպով ցույց է տալիս, որ 1251 թվակա-  
նին դեռ կանգուն և շեն էր կմբատավանքը:  
Դրանից հետո նրա պատմությունը ծածկը-  
ված է թանձր խավարով: Այնուամենայնիվ  
մի բան պարզ է ու հասկանալի, որ կմբա-  
տավանքը նույնպես, ինչպես Շիրակի ու Հա-  
յաստանի մյուս գավառների վանքերը,  
խիստ կերպով տուժեց մոնղոլական արշա-  
վանքների ժամանակ, քայքայվեց ու ամա-  
լացավ և այդ վիճակում էլ մնաց ու հասավ



ԼՄՐԱՏԱՎԱՆՔԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՆՉ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

տակությունները: Կատարված հնագիտական  
ուսումնասիրությունները ցույց են տալիս,  
որ նա հիմնական վերանորոգման ու որոշ  
փոփոխությունների և լրացումների է են-  
թարկվել, որոնք ամենայն հավանականու-  
թյամբ կատարված պետք է լինեն ԺԳ դարի  
առաջին քառորդում, Ջաքարյան իշխանների  
կողմից:

մինչև մեր օրերը, մինչև սովետական կար-  
գերի հաստատումը Հայաստանում:

Սովետական իշխանության տարիներին  
մեծ աշխատանքներ են կատարվել կմբատա-  
վանքի միակ եկեղեցու՝ ճարտարապետական  
այդ հոյակապ կոթողի պահպանության և ու-  
սումնասիրության ուղղությամբ: 1955 թվա-  
կանին նախատեսվող հիմնական վերանորո-

գումները կապակցութեամբ, 1954 թվականին անհրաժեշտ պեղումներ և լրացուցիչ ուսումնասիրութիւններ են կատարվել վանքի նկատմամբ, իսկ նշված ժամկետում ամբողջ-

ջովին ավարտվել են հուշարձանի հիմնական վերանորոգման ու բարեկարգման աշխատանքները (այդ մասին ավելի մանրամասն կանդորադառնանք նկարագրութիւնների բաժնում):

### ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Այն կապակցութեամբ, որ 1955 թվականին նախատեսվում էր հիմնական վերանորոգման ենթարկել կմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին, 1954 թվականին ան-

ջերտի հաստութիւնը հասնում էր մինչև երկու մետրի:

Երկու շաբաթ տևող պեղման աշխատանքներից հետո պարզվեց հետևյալը.



ԼՄԲԱՏԱՎԱՆՔԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԻՆ ԶՆՏՈ

հրաժեշտ եղավ որոշ պեղումներ կատարել հուշարձանի նկատմամբ, որովհետև նրան մոտիկ գտնվող վանական միաբանութեան և շինականների բնակելի շենքերը քանդվելով մեծ չափով ծածկել էին եկեղեցու պատերի արտաքին երեսը, մանավանդ արևմտյան ու հարավային կողմերից, ուր փլվածքների

1. Եկեղեցու արևմտյան խաչքնի հարավային պատին կից բացվեց մի ուրիշ խորան՝ խաչքնի հյուսիսային պատին կից խորանի նմանութեամբ: Պահպանվել էին խորանի պատերի ստորին երկու քարաշարերը, շարված կարմրագույն տուֆի սրբատաշ քարերով, իսկ ներսում, հողաշերտից հայտ-

նաբերված գոգավոր տաշված քարերը հաստատում էին, որ նա ունեցել է թաղակապ ծածկ:

2. Եկեղեցու արևմտյան կողմում, մուտքից հարավ, պատի ամբողջ երկարությամբ, բացվեց խաչարձանների ընդհանուր պատվանդանը՝ պատի ձևով, որի վրա պահպանվել էին երկու խաչքարերի ստորին մասերը՝ իրենց պատվանդանների հետ:

3. Եկեղեցու հյուսիսային կողմում, պատից մեկ մետր հեռու բացվեցին մի փոքրիկ կառուցվածքի մնացորդներ՝ սալահատակը և պատերի հիմքերը, որը հավանաբար պետք է դամբարան եղած լինի:

4. Այդ նույն հյուսիսային կողմում, գետնի մակերևութից կես մետրաչափ խոր, բացվեց անասունների աղբի հավասար հաստությամբ շերտ, իսկ եկեղեցու այդ կողմի պատի մեջ, քիչ վերև փորված էին ուլիղ գծով բազմաթիվ փոսեր, ինչ որ շենքի ծածկի փայտերի ծայրերը հենելու համար: Այդ մնացորդները վկայում էին, որ հետագայում այդտեղ բնակություն է հաստատված եղել, ուր եկեղեցու պատերն օգտագործել են շենքերի համար, ըստ որի հյուսիսային կողմից եղել է անասնագոմը (մանր քարերով ու ցեխով շարված պատերի մնացորդներ երևացին նաև եկեղեցու հարավային ու արևմուտյան կողմերում): Այդ կառուցվածքները բոլորովին ուշ ժամանակի են և հավանական է, որ պատկանեն 1830 թվականների Կարսի ու էրզրումի գաղթականությունը: Այդ հանգամանքը ինքնին վկայում է, որ այդ ժամանակ կառուցվածքը գտնվում էր քայքայված ու լքված վիճակում:

5. Եկեղեցու հյուսիսային ու հարավային կողմերում, հուշարձանի հիմնապատերին

հավասար, բացվեցին մի քանի գերեզմաններ՝ հարթ-տափակ երես ունեցող գերեզմանաքարերով, որոնց մշակման ձևը բնորոշ է թ—ժ դարերին:

6. Մուտքի առջևում բացվեցին շքամուտքի հետքերը, որը վկայում է հուշարձանի ավելի վաղ շրջանին պատկանելու մասին:

7. Պեղումների հետևանքով երկու մետր տրամագծով մաքրվեց հուշարձանի շրջապատը, մինչև հիմքերը՝ խորությամբ: Հողաշերտերից, որոնք փլվածքային էին ու լիցքային՝ հայտնաբերվեցին շենքին պատկանող բազմաթիվ բեկորներ՝ երեսապատման քարեր, քիվեր, տանիքի սալաձև ու կիսախողովակաձև կղմինդրներ, սալաքարեր, լուսամուտների շրջանակներ՝ քանդակազարդ պսակներով, ինչպես և կավե զանազան ամաններ, ոմանք գլազուրապատ-գունազարդ, մետաղյա գործիքներ, խաչքարերի քանդակազարդ բեկորներ և այլ իրեր, որոնք պատկանում են միջին դարերի տարբեր ժամանակաշրջաններին:

Հայտնաբերված ծածկի կղմինդրները, որոնք անկասկած պատկանում են այդ հուշարձանին, մի ավելորդ անգամ հաստատում են, որ նա պատկանում է վաղ շրջանում կառուցված շենքերի թվին: Պեղումներից ստացված մյուս իրերը վկայում են, որ ԺԴ դարից հետո այնտեղ բնակիչներ չեն եղել: Պեղումների ժամանակ հայտնաբերվեցին նաև կավե թրծած ջրատար խողովակների կտորներ, որն ապացույց է այն բանի, որ վանքն ունեցել է իր ջրմուղը: Այդ մասին վկայում է նաև հուշարձանի վրա փորագրված մի արձանագրություն (արձանագրություն № 1), որի համաձայն ոմն Կարապետ ջուր է բերել տալիս վանքը:

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԶԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնագմբեթ, խաչաձև հատակազիծ ունեցող կառուցվածք է, խաչթևերն ուղղանկյուն են, արևելյան խաչթևը արսիդային է՝ բեմով: Գմբեթի թմբուկը ութակող է, սրածայր վեղարով և հիմքին փոխանցվում է տրոմպների միջոցով: Միակ մուտքն արևմուտյան կողմից է, քանդակազարդ պարակալով և շքամուտքով: վերջինս ամբողջապես քանդակ է: Լուսամուտները յոթ հատ են՝ չորսը գմբեթի թմբուկի և մեկական արևելյան, արևմտյան և հարավային պատերի մեջ. բոլորն էլ երկար ու նեղ, կամարակապ ու քանդակազարդ պսակներով: Գմբեթի թմբուկի լուսամուտների պսակների քանդակները գծավոր են, զլանաձև, արևմտյան լուսամուտի պսակինը կլոր, իսկ հարավային լուսամուտի պսակի քանդակները բուսական

ձևի: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում քիվերը, որոնք սալաձև են և ունեն կլոր զարդաքանդակներ: Ներսից պատերը ծեփված են, որը մեծ մասամբ թափված է: Մեկի պահպանված մասերի վրա նկատելի են որմանկարների հետքեր, որը պատկերում է «Նորհրդավոր ընթրիք»-ը: Այդ որմանկարները բնական մեծությամբ արտանկարած և ցուցադրված են երևանի պետական Պատկերասրահում:

Շարված է վառ կարմրագույն տեղական հանքաքարի սրբատաշ քարերով, կրաշաղախով մածուցված: Տանիքը պատած է եղել կղմինդրով, որը փոխարինված է սալաքարերով: Նկատվում են հիմնական վերանորոգումների հետքեր, որի ընթացքում վերականգնված են պատերի թափված երեսա-

պատ քարերը, տանիքը պատած է սալաքարերով, վերականգնված են թափված քիվերը, սալահատակված է: Այդ վերանորոգումների ժամանակ, որը ամենայն հավանականությամբ պետք է կատարված լինի ԺԳ դարի առաջին քառորդում, եկեղեցու արևմտյան խաչվեհի հարավային ու հյուսիսային պատերին կից ավելացված են փոքրիկ խորան-մատուռներ, որոնք շարված են տեղական տուֆի մաքուր տաշված քարերով և ունեն թաղակապ ծածկ: Այդ խորանների արտաքին պատերը դուրս են ընկնում եկեղեցու արևմտյան պատից, իսկ դրանց դռները բացվում են եկեղեցու դռան առջևում՝ իրար դիմաց: Հյուսիսային խորանի մուտքի ճակատին դրված է քառակող կոթողի մի մեծ բեկոր, որի մի կողի վրա կա մարդու բարձրաքանդակ, իսկ մյուս կողի վրա՝ խաղողի ողկուզաձև քանդակներ. մշակման այդ ձևերը բնորոշ են Ե—է դարերին: Այդ խորանների ավելացման հետևանքով քանդել են եկեղեցու շքամուտքը: Մինչև վերջ նշված պեղումների, հարավային կողմի խորանը չէր երեվում, ուստի բոլոր ուսումնասիրողները, որոնք առիթ էին ունենում շափագրիլու այդ հուշարձանը, իրենց գծագրերում ցույց չէին տալիս նշված խորանը:

Բշտկա թոռների արձանագրության մեջ (արձանագրություն № 5) ասվում է, որ նրանց նվիրատվության դիմաց վանքի միաբանությունը խոստանում է նրանց հիշատակին պատարագ մատուցել երկու մատուռներում: Դրանից պարզ է դառնում, որ այդ ժամանակ արդեն գոյություն ունեին եկեղեցու արևմտյան խաչվեհին կից կառուցված խորան-մատուռները: Եվ որովհետև այդ արձանագրությունը, որի մասին առիթ ենք ունեցել խոսելու վերևում, պետք է փորագրված լինի ԺԳ դարի առաջին տասնամյակում, ապա այդ

խորան-մատուռների կառուցումը, ինչպես և եկեղեցու հիմնական վերանորոգումը պետք է տեղի ունեցած լինի այդ նույն ժամանակում:

Հայտնի չէ այդ հուշարձանի կառուցման ճիշտ ժամանակը, բոլոր ուսումնասիրողները, հիմք ընդունելով նրա ճարտարապետական ձևերի մշակումը, միահամուռ կերպով այն վերագրում են է դարին: Եվ իրոք, այդ ժամանակին պատկանող իր տեսակների մեջ նա խիստ բնորոշ ու յուրահատուկ է, ուստի առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայ ճարտարապետության պատմության համար:

Հուշարձանն այժմ կանգուն վիճակում է. մինչև 1955—1956 թվականների հիմնական վերանորոգումները քանդված էին գմբեթի վեղարի վերին մասը, արևելյան խաչվեհ արևելյան պատի հիմնապատը (ստիլբատ), շքամուտքը. թափված էին տանիքի բոլոր սալաքարերը, քիվերի մի մասը և մուտքի վեղարի երրեսապատման քարերը: 1955—1956 թվականների հիմնական վերանորոգումների ժամանակ, ամբողջապես վերականգնված են նշված քանդված մասերը, բացառությամբ շքամուտքի, միաժամանակ շրջապատը մաքրված, հարթեցված ու բարեկարգված է:

Վանքին պատկանող փոքրիկ գերեզմանոցը սարածվում է եկեղեցու շուրջը: Բոլոր գերեզմանաքարերն էլ կարմրագույն հանքաքարից են և մշակված են տարբեր ձևով՝ ըստ իրենց ժամանակաշրջանի: Գերեզմանաքարերի մի մասը ջարդված է, ոմանք տեղահան արված, մի մասն էլ թաղված է գետնի մեջ: Որոշ գերեզմաններ բացված են, ուր նկատվում է քարե դազաղը՝ գլխի համար փորված հատուկ փոսով: Գրավոր հիշատակություններ չեն նկատվում:

ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԽԱՉՎԵՀԻ ՀՅՈՒՄՆՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ՆԵՐՍՈՒՄ.

1. Կամալ բարեբարին Աստուծոյ եւ Կարապետս եկի
2. Ի Սուրբ Ստեփանոսի դուռնս եւ տեսայ որ ջու-
3. ր ոչ կայր ի սմայ եւ բնակչաց սորա թախանձեալ գի-
4. ս գինչ որ սմայ ունէի տփ յայսմս եւ բարէ-
5. խաս կալայ ինձ գսուրբ Ստեփանոս առ Աստուած որ գիս յի-
6. շեն ի սուրբ լնբատին... Սուրբ... տունին առնեն ին-
7. ձ ժամ արարին. գաւր արդ եթէ ոք հակառ կայ այս բ-
8. անիս եւ գիս մոռանայ, մոռացեալ լիցի յՈրդոյն Աստուծոյ:

2. ԳՐԵԹԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՏՈՒՄՔԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1. Թ. Ոս կամաւն Աստուծոյ եւ Տէր Բարսեղ որ
2. գնեցի զվանքս եւ ազատեցի յան—
3. արիւնաց եւ ետու գՅիցքն վանիցս

4. եւ ջուրն որ իւրն էր ի հնոց լեալ՝
5. յիշատակ ինձ եւ բարեխաւս առ Քրիստոս. երբէ
6. ոք գլխաւորապէս մեր խափանեացէ
7. նզովի յԱստուծոյ եւ յամենայն արքայ:

3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽԱՉԹԵՎԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1. Կամաք բարեբարին Աստուծոյ այս մեր արձան անջնջելի եւ յիշ-
2. առակ մշտնջենաւոր Տէր Գրիգոր առհիւսկապետոսի մայրաքաղ-
3. աքին Անույ եւ նահանգիս Շիրակա ժառանգորդի սեփական մերս
4. արոտոյս որ ետու նուէր յիմ հարեղբարն՝ յաստուածապատի Տեառն
5. Բարսղի, հալալ արդեամբք ստացեալ սուրբ ովստս Լմբաս զնորին գանձ
6. ազին գեղս մերձ ի յԱրդիք որ կռչի անուն Հայրանց Թաղք ընձ-
7. անցի զսա Սուրբ Ստեփանոսի հայրենիք մինչ ի կատարած յախտենիս,
8. յաղագս յիշատակի մերոյ եւ արեւշատութեան եղբար իմոյ Ղարփին եւ
9. հոգևոր Տեառն Բարսղի՝ ստացողի սոցա եւ ծնողաց մերոց. եւ եղի լուծ ի
10. վերայ սպասաւորաց սորա՝ ի տարին վեց ար պատարագ փոխարէնս
11. հատուցանել ի տանի Ղազարուն.— զերկուսն Տեառն Բարսղի, զերկուսն իմ
12. Հաւրն Ապուլամբի, զերկուսն իմ մաւրն Մահմլլքին՝ անխափան կատար-
13. են մինչ ի գալուստն Քրիստոսի. եւ մի ոք ի իշխեսցէ հակառակիլ եւ զյիշատակս
14. խափանել, իսկ երբէ յանդգնի եւ զայս գեղս յայս վանիցս հանել կա-
15. մենա հանցէ զնա Աստուած ի կենացն անվախեանիցն հոգով եւ մարմնով. իսկ
16. որք հաստատուն պանեն զգրեալս մեր արհնուրիւն Աստուծոյ եղիցի ի հոգի եւ
17. ի մարմին հոցա ամէն: Չերջանիկ հայր զԱռաքեալն եւ գտանուտէր եւ
18. որ զարդին արար տանս զԹորէն յիշեցէք ի Քրիստոս Չիրգէսանամ:

4. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԽԱՉԹԵՎԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1. Կամաքն Աստուծոյ եւ Տէր Գրիգոր, որդի Ապուլ-
2. ամբի Անույ եպիսկոպոս տուի զԱրդիք եւ
3. զԹորենոյ զիրիցութիւնն Լմբասս իմ հայրէ-
4. նեացն. եւ նոքա տարին :Ա: ար պատարագ՝ ինձ. հա-
5. ստատուն պահողին արհնիւն յԱստուծոյ եւ ի մէնջ: Երբէ
6. ոք հանել ջանս՝ կամ ի նախանձու կամ բռնութեամբ,
7. Զկանենիւն եւ զՅուդաի անցէ, :ՅԺԸ:-իցն նզով-
8. եալ լիցի եւ մեր մեղացն պարտական եղիցի:

5. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽԱՉԹԵՎԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1. Շնորհիւն Աստուծոյ եւ Գրիգոր եւ իմ եղբարս՝ Բշտկա թոռ-
2. ներս տուաք զմեր հայրենիքս զՍտանաղբիր ի Սուրբ Ստեփանոսս
3. ի հայրութեանս Մովսիսի եւ իւր սիրելի եղբարցս Առ-
4. աքելիս եւ Վարդանա, ի յիշատակ մեր ծնողացն եւ մեզ.
5. եւ սոքա սահմանեցին զՍուրբ Խաչին շարաքն արն :Բ:
6. մատուցն պատարագել զՔրիստոս՝ :Ա: արն Միսիթաւ,
7. :Ա: Հոգնվկա:

6. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԽԱՉԹԵՎԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՏ.

1. Կամա բարեբարին Աստուծոյ եւ Զաբաբ ամիր սպասալար եւ Շահնշան
2. եւ մանդաւոր թախուցայս ետու զՅիցքն իւր հողովն, ջրովն, լեռ-
3. նականաւ եւ դաշտականաւ ի Սուրբ Ստեփանոսս եղիցի յիշատակ ինձ

4. Եւ եղբարն իմոյ Իանէի եւ ծնողաց մերոց... մեզ ի տանի
5. Սուրբ Խաչին յամենայն եկեղեցիս իմ ծնողաց կատարեսցեն....
6. Եւ Սարգսայ Եւ զկնի կենաց իմոց՝ ինձ ի Հայրութեան ամեն:

7. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԽԱՉԹԵՎԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍ.

1. Շնորհիւն Աստուծոյ եւ Սիմեոն Մոպուլիս որ-
2. դիս, որ ետու զիմ այգին որ մատ Յանտեցն
3. է, զիմ բաժինն Լմպատայ Սուրբ Ստեփանոսի
4. Եւ բարեխաւսն առ Քրիստոս. արդ եթէ ոք հակառակ կայ
5. այս բանիս, Քրիստոս Աստուած նզովէ զիր մահն եւ զիր կեան-
6. քն, եթէ ոք հակառակաբար ջնջել ջանա զսա,
7. ջն [ ջեա ]ցէ զնա յափտենից կենաց:

8. ԿՄԲԵԹԻ ԹՄԲՈՒԿԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍ.

1. կաման Աստուծոյ եւ Բարսեղ Մե-
2. տրէ զիմ այգին զմասն
3. Սուրբ Ստեփանոս [ էտու ]
4. Եւ սպասաւորք սորա պատ-
5. արագ արնեն անխափան:

9. ԿՄԲԵԹԻ ԹՄԲՈՒԿԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍ.

1. ԹՎ. Չ
2. Կաման Աստուծոյ եւ Իշխանս որ իմ կաման եւ իմ սրտի
3. յուժարութեամբ զիմ բնձանն ծախեցի Լմբատայ Սուրբ
4. Ստեփանոսի ու յուր Խաչատրոյ սպասար-
5. ի: ծախեցի, զվնար ստի. ոչ ում արդաչ կայ յետ
6. Սուրբ Ստեփանոսի՝ ոչ իմոց եւ ոչ աւարաց եւ Յայր Ա.-
7. նեցի այ եւ Վանեցի Գէորգս գրեցի հրամանս Իշ-
8. խանիս Զայլշահապս: ՅԺԸ: նզովեսցէ ով խափանէ:

